ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ՝ Պալատ)** խորհուրդը, մասնակցությամբ Պալատի խորհրդի նախագահ Սիմոն Բաբայանի, խորհրդի անդամներ՝ էմին Բեգլարյանի, Պավել Գյուլումյանի, Մանե Կարապետյանի, Արսեն Հարությունյանի, Հարություն Հարությունյանի, Լիլիթ Ղազանչյանի և Մարինե Ֆարմանյանի,

քննության առնելով «Հայաստանի Հանրապետության փաստաբանական ակադեմիա» հիմնադրամի կառավարման խորհրդի կազմը հաստատելու մասին հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

Պալատի խորհրդի 20.04.2021 թվականի թիվ 6/15-Ա որոշմամբ կազմավորվել է Փաստաբանների դպրոցի կառավարման խորհուրդ՝ մինչև 2024 թվականի ապրիլի 20-ը պաշտոնավարման ժամկետով:

««Փաստաբանության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 05.10.2022թ. (ՀՕ-366-Ն) օրենքի (**այսուհետ՝ Օրենք**) ուժով անհրաժեշտություն է առաջացել կազմավորել ՀՀ փաստաբանական ակադեմիայի կառավարման նոր խորհուրդ **(այսուհետ՝ նաև Կառավարման խորհուրդ), քանի որ** *«Փաստաբանության մասին» օրենքի փոփոխության համաձայն Կառավարման խորհրդի կազմը ենթարկվել է փոփոխության, որը վերաբերում է խորհրդի թվակազմին, հանձնաժողովի նախագահին, ինչպես նաև իրավաբան գիտնական ներառելու կանոնակարգումներին:*

«Փաստաբանության մասին» օրենքի 45.4-րդ հոդվածի երրորդ մասի համաձայն՝ **Կառավարման խորհուրդը կազմավորվում է երեք տարի ժամկետով՝ յոթ անդամի կազմով, ներկայացուցչության հետևյալ համամասնությամբ.**

1) փաստաբանների պալատի նախագահը՝ ի պաշտոնե.

2) փաստաբանների պալատի ընտրած երեք փաստաբան.

04 մայիսի 2023թ.
թիվ 11/5-Ա

3) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունից մեկ ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի ներկայացմամբ.

4) երկու իրավաբան գիտնական՝ սույն հոդվածով սահմանված կարգին և պայմաններին համապատասխան:

ՀՀ փաստաբանական ակադեմիայի կանոնադրության 125-րդ կետի համաձայն՝ ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 20.04.2021թ. թիվ 6/15-Ա որոշմամբ ձևավորված ՀՀ փաստաբանական դպրոցի կառավարման խորհուրդը (այսուհետ՝ նախկին կազմով խորհուրդ) շարունակում է իր լիազորությունները մինչև ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի կողմից Օրենքով սահմանված կարգով ՀՀ փաստաբանական ակադեմիայի կառավարման խորհրդի նոր կազմ ձևավորելը: Նոր կազմի լիազորությունները ստանձնելու պահից նախկին կազմով խորհրդի լիազորությունները դադարում են:

ՀՀ փաստաբանների պալատ է մուտքագրվել Արդարադատության նախարարի 06.04.2023թ. (մուտք՝ 767-23) գրությունը, որով առաջարկվել է Արդարադատության նախարարի խորհրդական Արտյոմ Սուջյանի թեկնածությունը:

«Փաստաբանության մասին» օրենքի 45.4-րդ հոդվածի 5-րդ մասի և ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 03.02.2023թ. թիվ 4/8-Լ որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության փաստաբանական ակադեմիայի կառավարման խորհրդի իրավաբան գիտնական անդամների թեկնածուների ներգրավման» կարգի (**այսուհետ՝ Կարգ**) 3-րդ կետի համաձայն Պալատի խորհուրդը 14.03.2023թ. հայտարարել է Կառավարման խորհրդի իրավաբան-գիտնական անդամների մրցույթ:

Պալատի խորհրդի 04.04.2023թ. թիվ 9/16-Լ որոշմամբ հաստատվել է իրավաբան-գիտնական անդամների թեկնածուների ցանկը, իսկ 04.05.2023թ. թիվ 11/4-Լ որոշմամբ այդ ցանկից ի.գ.թ. Լյուդվիկ Դավթյանը և ի.գ.դ., դոցենտ Նազելի Սուքիասյանը ընտրվել են որպես Կառավարման խորհրդի անդամներ:

«Փաստաբանության մասին» օրենքի 45.4-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ *Փաստաբանների պալատի խորհրդի յուրաքանչյուր անդամ իրավունք ունի առաջադրելու կառավարման խորհրդի՝ սույն հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված անդամի թեկնածու՝ վերջինիս համաձայնությամբ: Փաստաբանների պալատի խորհրդի յուրաքանչյուր անդամ կարող է քվեարկել ոչ ավելի, քան երկու մասնակցի օգտի: Ընտրված են համարվում ձայների առավելագույն քանակ ստացած թեկնածուները:*

Խորհրդի նախագահի կողմից որպես Կառավարման խորհրդի փաստաբան անդամներ առաջարկվել են բարձր մասնագիտական որակներով օժտված փաստաբաններ՝ Նիկոլայ Հակոբյանի (արտոնագիր № 414, մոտ 22 տարվա փաստաբանական ստաժ), Լեոնիկ Հովհաննիսյանի (արտոնագիր № 568, մոտ 17

տարվա փաստաբանական ստաժ) և Տիգրան Խուրշուդյանի (արտոնագիր № 451, մոտ 18 տարվա փաստաբանական ստաժ) թեկնածությունները:

Օրենքի 45.4-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն Խորհրդի անդամների կողմից ընտրվեցին փաստաբաններ՝

- Նիկոլայ Հակոբյանը.
- Լեոնիկ Հովհաննիսյանը.
- Տիգրան Խուրշուդյանը:

Ելնելով վերոգրյալից և նկատի ունենալով ՀՀ փաստաբանական ակադեմիայի կառավարման խորհրդի հանձնաժողով կազմավորելու անհրաժեշտությունը,

ղեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 21-րդ կետի և 45.4-րդ հոդվածի, Պալատի կանոնադրության 16.5-րդ կետի 47-րդ և 48-րդ ենթակետերով, ինչպես նաև ՀՀ փաստաբանական ակադեմիայի կանոնադրության 34-րդ և 35-րդ կետերի պահանջներով, Պալատի խորհուրդը,

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբաններ Նիկոլայ Հակոբյանին (արտոնագիր № 414), Լեոնիկ Հովհաննիսյանին (արտոնագիր № 568) և Տիգրան Խուրշուդյանին (արտոնագիր № 451) ընտրել որպես «Հայաստանի Հանրապետության փաստաբանական ակադեմիա» հիմնադրամի կառավարման խորհրդի փաստաբան անդամներ:

2. Կազմավորել և հաստատել «Հայաստանի Հանրապետության փաստաբանական ակադեմիա» հիմնադրամի կառավարման խորհուրդը՝ հետևյալ կազմով.

1) ***ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայան՝ ի պաշտոնե (արտոնագիր № 55).***
2) ***Նիկոլայ Հակոբյան՝ փաստաբան (արտոնագիր № 414).***
3) ***Լեոնիկ Հովհաննիսյան՝ փաստաբան (արտոնագիր № 568).***
4) ***Տիգրան Խուրշուդյան՝ փաստաբան (արտոնագիր № 451).***
5) ***Լյուդվիկ Դավթյան՝ իրավաբան գիտնական (ի.գ.թ.).***
6) ***Նազելի Սուքիասյան՝ իրավաբան գիտնական (ի.գ.դ., դոցենտ).***
7) ***Արտյոմ Սուջյան՝ ՀՀ արդարադատության նախարարության ներկայացուցիչ, ՀՀ արդարադատության նախարարի խորհրդական:***

3. Սահմանել, որ «Հայաստանի Հանրապետության փաստաբանական ակադեմիա» հիմնադրամի կառավարման խորհուրդը կազմավորվում է երեք տարի ժամկետով և գործում է 2023 թվականի մայիսի 4-ից մինչև 2026 թվականի մայիսի 4-ը (ներառյալ):

4. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել Կառավարման խորհրդի նորընտիր անդամներին, ինչպես

նաև ապահովել սույն որոշման հրապարակումը Պալատի կայքէջում:

5. Իրազեկել «Հայաստանի Հանրապետության փաստաբանական ակադեմիա» հիմնադրամին կառավարման խորհրդի նորընտիր կազմի ձևավորման մասին:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
խորհրդի նախագահ՝ Սիմոն Բաբայան

04 մայիսի 2023թ.
թիվ 11/5-Ա
ք. Երևան